Եշի օրս (25 Յունուար) մունետիկն աղաղակէր ի շուկայս ամենայն քաղաքիս՝ թէ ի Պրուսայու[1]) մարգիկն, որ Դշի տեսեալ էր (Ռեբրի)։

Ուրբաթի օրս (26 Յունուար) զթղթերն Երուսաղէմայ գրեցի եւ տվաք ուխտաւորացն։

Հռոմի տղայ ոմն երթեալ մտանէր առ Հայոց վանառականսն արևելեան, եթէ սպասաւորեսցէ վասն հացին և ապրելոյ անձինն՝ ի մեծ խանն որ ասի Վալիտէ. և յետ սակաւ աւուրց իմացեալ Յունացն զայս, զոր աշակերտեալ էր երբեմն առ դերձակի պետի, եւ երթեալ անդ պարսաւեն և ըմբռնեալ զնա տան ի ձեռս սուպաշուն եթէ Տաճկացեալ է դա երբեմն՝ որ առ մեզ էր. եւ նա առեալ տաճկացոյց։

Շաբաթի օրս (27 Յունուար), որ եկեալ գնացին յՈւսկիւտարու ցամաքաւ ընդ փաշային Մսրայ։ Երեկոյս Մկրտիչ Եաղուպն ի մերս էր։

Կիրակի (28 Յունուար). բարեկենդան Վարդավառի։

Ուրբաթ (3 Յունուար). պայրամ արարին տրտմութեամբ մեծաւ, զի ոչ ունէին յայսմ տարւոջ օրորոց երկայնս, որ օրվէին փողով մեծաւ և մեծ ուրախութեամբ, եւ մեք ոչ իմացաք թէ զի՛նչ էր պատճառն, բայց զայս՝ յորմէ հետէ գնացեալ եղեն ի պատերազմ ոչ եկն մի ձայն թէ այսպէս և թէ այնպէս։

Օրս հանին զՏէր Գէորգն աղերսիւք մեծաւ ի փաշէն։

Եւ օրս երկու ընկեր միմեանց երթան ի նամազ եւ ի դուրս ելանեն եւ ի շնորհաւորելն[2]) զմիմեանս զպայրամն, եւ նա որ ի սկզբանէ զնա անարգէր արհամարհանօք և ասէր թէ Ձքեզ ծախելոց եմ և զվինն ուտելոց եմ, նա՛ միւսոյն յոյժ խորովեալ սիրտն, եւ

1) պրու. 2) շնահաւորելն.